Հաստատում եմ՝
Աննա Տեր-Հովակիմյան
«Երաժշտություն հանուն ապագայի»
մշակութային հիմնադրամի տնօրեն
ք. Երևան, 20 «հոկտեմբերի» 2023թ.

«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի կրթական և զարգացման 2023/2024թթ. ծրագրի կրթաթոշակառուների և անդամների պարտականություններ

«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի (Հիմնադրամ) կրթական և զարգացման ծրագրի (Ծրագիր) դիմորդի՝ Հիմնադրամի կրթաթոշակառու (Կրթաթոշակառու) կամ անդամ (Անդամ) դառնալու դեպքում նրա նկատմամբ ներկայացվում են հետևյալ պահանջները, որոնց Կրթաթոշակառուն/Անդամը/նրանց անունից հանդես եկող Օրինական ներկայացուցիչը պարտավոր է հետևել Ծրագրում ներգրավվածության ամբողջ ընթացքում.

1. **Վարպետության դասերին մասնակցության դեպքում.**
   1.1. Պարտաճանաչ, կանոնավոր և առանց անհարգելի բացակայությունների հաճախել դասերին՝ որպես ակտիվ մասնակից, և նեկա լինել դասերին՝ որպես պասիվ մասնակից, այդ թվում՝
   - Իրենց մասնագիտությամբ դասերին (օրինակ՝ դաշնամուր-դաշնամուր)՝ պարտադիր,
   - Այլ մասնագիտությունների գծով դասերին (օրինակ՝ դաշնամուր-ջութակ)՝ ըստ ցանկության, եթե տվյալ դասին ներկա գտնվելու համար չկա Հիմնադրամի կողմից պարտադիր պահանջ:

   1.1.1. Մարզերում բնակվող և սովորող երեխաները, ակտիվ և պասիվ վարպետության դասերին մասնակցում են՝ ըստ Հիմնադրամի հետ պայմանավորվածության՝ կախված վարպետության դասի անցկացման վայր գալու հնարավորությունից:

   1.1.2. Վարպետության դասերի արտիստ-Կրթաթոշակառու/Անդամ բաշխվածությունը որոշում է Հիմնադրամը:

   1.2. Հետևել իր մասնագիտական առաջընթացին և ապահովել մասնագիտական աճ Կրթաթոշակառու/Անդամ լինելու ամբողջ ընթացքում:

   1.3. Ունենալ ռուսերենի կամ անգլերենի (կախված վարպետության դասի անցկացման լեզվից) իմացության այնպիսի մակարդակ, որի պարագայում հնարավոր կլինի հաղորդակցությունը և ըմբռնելիությունը վարպետության դասի ընթացքում:

   1.4. Ակտիվ մասնակցության դեպքում նախապես էլ. փոստով Հիմնադրամին ուղարկել վարպետության դասի ծրագիրը:

   1.5. Վարպետության դասին մասնակցության դեպքում հանդես գալ նվագակցողի հետ և ինքնուրույն ապահովել նվագակցությունը, եթե ստեղծագործությունը կատարվում է նվագակցությամբ:

   1.6. Պահպանել Հիմնադրամի նկատմամբ հաշվետվողականություն: Կրթաթոշակառուն/Անդամը և Օրինական ներկայացուցիչը հաշվետու են Հիմնադրամի առջև Կրթաթոշակառուի/Անդամի մասնագիտական աճի առնչությամբ:
   Պայմանագրի ստորագրման պահից սկսած յուրաքանչյուր հաշվետու կիսամյակի համար Օրինական ներկայացուցիչը մինչև տվյալ կիսամյակի վերջին աշխատանքային օրը Հիմնադրամի՝ «scholarship@m4f.foundation» էլ. փոստի հասցեին ուղարկում է

Կրթաթոշակառուի/Անդամի նոր կատարված տեսագրություն նոր ծրագրով առնվազն 5 րոպե տևողությամբ և լրացված հաշվետվություն՝ Մասնագիտական աճի վերաբերյալ հաշվետվություն (Word ձևաչափով):

1.6.1. Կիսամյակային տեսագրության նկատմամբ պահանջներն են.

- ազատ ծրագիր (1 կամ մի քանի ստեղծագործություն), որը Կրթաթոշակառուն/Անդամը պատրաստել է տվյալ կիսամյակի ընթացքում,
- ծրագիրը կարող է կատարվել անգիր կամ նոտաներով,
- Կրթաթոշակառուն/Անդամը պետք է հանդես գա մենանվագ ստեղծագործության կատարումով (որպես մենակատար): Եթե ներկայացվող ստեղծագործությունը/ները կատարվում է/են նվագակցությամբ, ապա Կրթաթոշակառուն/Անդամը պետք է ինքնուրույն ապահովի նվագակցություն:
- տեսաձայնագրությունը չպետք է լինի մոնտաժված և ձայնագրությունը չպետք է ենթարկված լինի մշակման,
- տեսաձայնագրությունը պետք է լինի բարձր որակով (նվազագույնը՝ HD 720p որակով), ստատիկ նկարահանված, և պետք է երևան մենակատարի գործիքն ամբողջությամբ (դաշնամուրի դեպքում՝ ստեղնաշարը), մենակատարի գլուխը, ձեռքերը և մատները,
- թույլատրվում է ներկայացնել նաև տանը կատարված տեսաձայնագրություն:

1.6.2. Կրթաթոշակառուի/Անդամի կիսամյակային տեսագրությունները տեղադրվում են Հիմնադրամի YouTube-յան էջում:

2. Համերգներին մասնակցության դեպքում.

2.1. Պարտաճանաչ, կանոնավոր և առանց անհարգելի բացակայությունների մասնակցել իրենց մասնակցությամբ համերգներին և փորձերին:

- Համերգներին պատրաստվելու համար անհրաժեշտ է ներկա լինել փորձերին՝ Հիմնադրամի նշած ժամանակացույցով:
- Համերգներից առաջ անհրաժեշտ է Հիմնադրամի նշած ժամկետներում Հիմնադրամին ուղարկել թարմացված երկացանկ:
- Համերգների ժամանակ Կրթաթոշակառուն/Անդամը ինքնուրույն պետք է ապահովի իր նվագակցությունը, եթե այդպիսին պահանջվում է:

3. Թանգարանային այցերի դեպքում.

3.1. Պարտաճանաչ, կանոնավոր և առանց անհարգելի բացակայությունների մասնակցել թանգարանային այցերին՝ ըստ Հիմնադրամի կողմից նախանշված թանգարանների և սահմանված ժամանակացույցի:

3.2. Մարզերում բնակվող և սովորող երեխաները, թանգարանային այցերին մասնակցում են՝ ըստ Հիմնադրամի հետ պայմանավորվածության՝ կախված թանգարանի գտնվելու վայր գալու հնարավորությունից:

4. Օտար լեզուների դասերին մասնակցության դեպքում.

4.1. Պարտաճանաչ, կանոնավոր և առանց անհարգելի բացակայությունների մասնակցել օտար լեզուների բանավոր խոսքի զարգացման դասերին՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

4.2. Մարզերում բնակվող և սովորող երեխաները, օտար լեզուների դասերին մասնակցում են՝ ըստ Հիմնադրամի հետ պայմանավորվածության՝ կախված դասերի անցկացման վայր գալու հնարավորությունից:

5. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի (ՀՊՍՆ) համերգներին այցելելիս.

5.1. Պարտաճանաչ, կանոնավոր և առանց անհարգելի բացակայությունների ներկայանալ ՀՊՍՆ-ի համերգներին (Հիմնադրամի կողմից այլ համերգներին այցելելու հնարավորության դեպքում՝ նաև այդ համերգներին), իսկ փորձերին՝ ըստ պահանջի:

- Համերգներին պետք է ներկա լինել դասական համերգին այցելելու հարիր հանդերձանքով և դրսևորել համապատասխան վարքագիծ:
- Դահլիճում նստել ըստ հրավիրատոմսի իրեն հատկացված վայրում:
- Համերգից հետո մոտենալ ետնաբեմ, շնորհավորել դիրիժորին և սոլիստին:
- Ներկա լինել համերգին մինչև ավարտ:

6. Ֆինանսական աջակցություն ստանալու դեպքում

6.1. Օգտագործել ստացած գումարային աջակցությունն ըստ Օրինական ներկայացուցչի կողմից նախապես՝ Պայմանագրի ստորագրման պահին, նշված նպատակների:

6.2. Պահպանել Հիմնադրամի նկատմամբ հաշվետվողականություն: Կրթաթոշակառուն և Օրինական ներկայացուցիչը հաշվետու են Հիմնադրամի առջև ստացված Կրթաթոշակի տնօրինման և օգտագործման նպատակայնությունը հիմնավորելու առնչությամբ:

Ֆինանսական աջակցության տրամադրման յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար Կրթաթոշակառուի Օրինական ներկայացուցիչը մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը Հիմնադրամի՝ «scholarship@m4f.foundation» էլ. փոստի հասցեին ուղարկում է Կրթաթոշակի տնօրինման և օգտագործման վերաբերյալ հաշվետվություն, որի շրջանակներում Կրթաթոշակի տնօրինման և օգտագործման ուղղությունները պետք է համընկնեն նախապես Հիմնադրամի կողմից սահմանված ծախսման ուղղությունների հետ:

7. Պարտաճանաչ, կանոնավոր և առանց անհարգելի բացակայությունների մասնակցել և ներկայանալ Հիմնադրամի նպատակներից բխող բոլոր այլ նախաձեռնություններին:
8. Ցուցաբերել ակտիվություն սոցիալական հարթակներում՝ կիրառելով «#/@M4FF», «#/@MusicforFuture», «#/@M4FFoundation» հեշթեգերը (կիսվել իր ձեռքբերումներով, մասնագիտական ունակություններով, տեղադրել իր մասնակցությամբ/ներկայությամբ վարպետության դասերին, համերգներին, միջոցառումներին, նախաձեռնություններին առնչվող և/կամ իր գրանցած հաջողություններին առնչվող լուսանկարներ, տեսանյութեր, այլ տեղեկատվություն, կազմակերպել/մասնակցել մարտահրավերներ («challenge») և այլն՝ նշելով (tag անելով) Հիմնադրամի սոցցանցերի էջերը):
9. Սույն փաստաթղթի 1-8 կետերով նախատեսված նախաձեռնություններին չմասնակցելու դեպքում Հիմնադրամի «scholarship@m4f.foundation» էլ. փոստի հասցեին ներկայացնել Կրթաթոշակառուի/Անդամի հարգելի բացակայությունը հիմնավորող գրավոր պատճառ և փաստաթուղթ (օրինակ՝ հիվանդության դեպքում՝ բժշկի կողմից տրամադրված տեղեկանք):
10. Պարտադիր վկայակոչել բոլոր հանրային հրապարակումներում (կենսագրություն, ԶԼՄ-ների հարցազրույցներ, հոդվածներ, մրցույթներին դիմելու հայտեր, իր մասին հրապարակումներ սոցիալական հարթակներում/այլ ռեսուրսներում և այլն) «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի Կրթաթոշակառու/Անդամ լինելու փաստը Պայմանագիրը ստորագրելու պահից առնվազն հինգ տարի շարունակ:

11. Չանդամակցել/չմասնակցել Հիմնադրամից դուրս այլ ծրագրերին/նախաձեռնություններին, որոնք չունեն կրթական բաղադրիչ և չեն նպաստում Կրթաթոշակառուի/Անդամի կրթական և զարգացման առաջընթացին: Կրթաթոշակառուն/Անդամը կարող է անդամակցել միայն այլ այն ծրագրերին, որոնք ունեն կրթական բաղադրիչ և նպաստում են Կրթաթոշակառուի/Անդամի կրթական և զարգացման առաջընթացին:
12. Ներկայացնել Հիմնադրամին իր կամ Օրինական ներկայացուցչի անձնական տվյալների (օրինակ՝ դպրոց, հասցե, հաշվեհամար և այլն) փոփոխության մասին տեղեկություններ:
13. Տեղեկացնել Հիմնադրամին իր մասնակցությամբ համերգների, դասերի, քննությունների, տարբեր նախաձեռնությունների և դրանց ժամկետների մասին, որոնք կարող են այս կամ այն ձևով խոչընդոտել Հիմնադրամի շրջանակներում Կրթաթոշակառուի/Անդամի գործունեությանը:
14. Ժամանակին պատասխանել իրեն ուղղված նամակներին՝ առանց Հիմնադրամի կողմից հիշեցումներ ուղարկելու, հակառակ դեպքում Հիմնադրամն իրավունք ունի չառաջնորդվել Կրթաթոշակառուի/Անդամի և/կամ նրա Օրինական ներկայացուցչի ցանկությամբ՝ տվյալ նամակով պահանջվող գործողությունների առնչությամբ:
15. Նախապես տեղեկացնել Հիմնադրամին երկրից բացակայությունների մասին, եթե այդպիսիք կան՝ Հիմնադրամի «scholarship@m4f.foundation» էլ. փոստի հասցեին գրավոր նամակի տեսքով:
16. Ուղարկել Հիմնադրամի «scholarship@m4f.foundation» էլ. փոստի հասցեին Կրթաթոշակառուի/Անդամի նշանակալի ձեռքբերումները՝ մրցանակները, դիպլոմները՝ Հիմնադրամի կայքում և սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում տեղադրելու համար:

17. Արտերկրում վարպետության դասի/համերգի մասնակցության դեպքում

17.1. Ինքնուրույն ապահովել ելքի արտոնագրի և վիզայի առկայություն (եթե այդպիսին պահանջվում է):

17.2. Վերադառնալ ՀՀ արտերկրում վարպետության դասի/համերգի մասնակցելուց հետո:

17.3. Փոխհատուցել Հիմնադրամի կողմից կատարված ծախսերը, եթե Կրթաթոշակառուն (նրա անունից հանդես եկող Օրինական ներկայացուցիչը) հրաժարվում է արտերկիր մեկնել՝ Հիմնադրամի պաշտոնական էլ. փոստին արդեն իսկ ուղարկված հաստատումից հետո: (Բացառություն է կազմում մասնակցությունից հրաժարվելը ֆորս մաժորային իրավիճակի առկայության հիմքով՝ համապատասխան հիմնավոր փաստաթղթեր ներկայացնելու դեպքում):

18. Հետևել էթիկայի և վարքագծի նորմերին:

18.1. Հիմնադրամի Կրթաթոշակառուն/Անդամը և/կամ նրա Օրինական ներկայացուցիչը Հիմնադրամի Ծրագրի և Հիմնադրամի հետ իրենց ծավալած գործունեության շրջանակներում պարտավոր են պահպանել էթիկայի և վարքագծի նորմեր, որոնք են.

18.1.1. ՀՀ-ում և/կամ արտերկրում Հիմնադրամի նպատակներից բխող բոլոր նախաձեռնությունների շրջանակներում՝

- հետևել Հիմնադրամի կազմակերպիչների ցուցումներին և հրահանգներին,
- լինել պարտաճանաչ և պատասխանատու,
- հետևել Հիմնադրամի կողմից սահմանված ժամանակացույցին՝ չուշանալ, պատասխանել նամակներին ժամանակին, հաշվետվությունները, տեսագրությունները, նշանակալի ձեռքբերումները ներկայացնել ժամանակին,
- դրսևորել հարգալից և կիրթ պահվածք,

- դրսևորել ազնիվ և բարեխիղճ վարքագիծ, որը բացառում է ստախոսություն, բամբասանք, նախանձ, ատելություն, ագրեսիա, վիրավորանք, կեղծ ինֆորմացիա,
- պահպանել կարգապահության և անվտանգության կանոններ՝ բացառելով սեփական և շրջապատի կյանքի, առողջության և գույքի վնասում,
- պահպանել փոխօգնության և համագործակցության մթնոլորտ, լինել համերաշխ և հոգատար,
- լինել քաղաքավարի՝ չաղմկել, չխանգարել մյուսներին,
- ունենալ և պահպանել էսթետիկ կեցվածք (օրինակ՝ արտաքին տեսք, խոսելաոճ)
- ներկայանալ իրենց տարիքին համապատասխան հանդերձանքով և արտաքին տեսքով՝ հիմք ընդունելով այն վայրը/միջոցառումը, որ այցելում են (դաս, համերգ, թանգարան և այլն),
- հետևել իրենց հանրային խոսքին,
- ներկայանալ պատրաստված վարպետության դասերին, օտար լեզվի դասերին, համերգներին, փորձերին, Հիմնադրամի կազմակերպած այլ նախաձեռնություններին,
- ցուցաբերել ակտիվություն և նախաձեռնողականություն (օր.՝ վարպետության դասերի, օտար լեզուների դասերի և այլն ընթացքում), սոցիալական հարթակներում,
- ժամանակին պատասխանել իրենց ուղղված նամակներին՝ առանց Հիմնադրամի կողմից հիշեցումներ ուղարկելու,
- արտերկիր մեկնելու հնարավորության դեպքում այդ մասին տեղեկանալուց հետո էլ. փոստով հաստատել Կրթաթոշակառուի մասնակցությունը կամ բացակայությունը:

Վերոնշյալ, ինչպես նաև Հիմնադրամի նպատակներից բխող այլ պահանջներն ու պարտականությունները չկատարելու դեպքում Հիմնադրամն իրավունք ունի որոշում կայացնել միակողմանիորեն լուծել Կրթաթոշակառուի/Անդամի Օրինական ներկայացուցչի հետ կնքված պայմանագիրը: